ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 205-Ա «12» հունիսի 2019 թ.

ՎԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
Ք.ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ ու 209-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանելու մասին» N 1239-Ն որոշումը

կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ /ծածկագիր՝ 64.2-1.9/ Վանիկ Հարությունյանին 2019 թվականի հունիսի 12-ից հունիսի 14-ը ներառյալ, երեք օրով գործուղել ք.Երևան՝ Երևանի պետական համալսարանի կողմից անցկացվող «Մրցույթի հարցազրույցի փուլը վարելու համար հանձնաժողովի անդամներին անհրաժեշտ հմտություններ» թեմայով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

ՄԱՐԶՊԵՏ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ